

անքը ոչ մի առաջընթաց չէլ չկա-
րողանալով անել ներքին միջնորդում
պտոյտ էր գործում, մինչև որ Լօրտ
Բէքօնը վրայ հասնելով՝ մտաւոր ա-
ռաջընթացին և զարգացման ար-
գելը հանդիսացող այդ երկու ամբողջ-
ներն իբր թէ յարձակմամբ առնելով և
հիմքից տապալելով նուր քաղաքակր-
թութեան մեծագոյն ռահվիրան հան-
դիսացաւ:

Բէքօնը հրաւէր կարդաց մարդ-
կութեան ոչ թէ աստուածաբանական
ուսումով կամ վերացական գաղափար-
ներով, այլ աչքի առաջ դնելով բնա-
կան երկայնքի ուսումնասիրու-
թեամբ զբաղուելու Նա ցոյց տուեց
բնութիւնը — քարն ու հո-
ղը, օդն ու ջուրը — տեսանելի և շօշա-
փելի առարկաները քննելու կարևորու-
թիւնը: Եւ՝ ի մի բան, նա մարդկու-
թիւնը իր նեղ աշխարհից՝ բնութեան
աները և անսահման տիեզերքին ա-
ռաջնորդեց: Եւ այս մի մեծ յաղթա-
նակ էր:

(Շարունակելի)

Միմբան Բաղդասարեան

ՆՈՐ ԿԱԶՄ՝)

Եւ միանգամայն նոր ընտրութիւններ

«Թաւրիզի Յայտարարութիւններ»ի
(այն է՝ Ատրպատականի առաջնորդի
և թեմական խորհրդի պաշտօնական
օրգանի) 25 Մարտ 16 համարում
կարդում ենք. «Անձնափոխանորդներ
հրաւիրելով թեմական խորհրդի կազմը
մի կերպ ամբողջացնելուց յետոյ գըտ-
նուում ենք նորից վերջնական կազմա-
լուծման հանդէպ»: Խորհրդի անդամ-
ներից մէկը (պ. Սմբատ Մ. Սարգս-
եան ծ. հ.) շուտով պէտք է հեռանայ
քաղաքից և կման երկու իրենց պա-
սօններով (շաւ րեցէք ծ. հ.) առաջ-
նորդարանի նստակալութեան մէջ (այն է
պ. Նիկողոս և Գարապետ քահանան),
որոնք խորհուրդ կազմելու բոլոր գոր-
ծերը առաջ տանելու չեն կարող: Եւ առ-
կայն, հակառակ թեմի օրգանի այս
յոյժ պաշտօնական բացարձակ յայտա-
րարութեան և խոստովանութեան, այդ
երկու անձինքն առի՞նք են գործերը, հա-
կառակ թեմական կանոնադրութեան
շատ բացորոշ յօդուածով, որ թեմական
խորհրդի համար ուրեմ անձնակազմ
է պահանջում և ոչ երկու անձնակազմ
խիստ պակասաւոր և ոչ օրինական կազ-
մը: Բայց մենք շարունակենք լսել ա-
ռաջնորդարանի պապօսնական օրգա-
նին: Նոյն համար. «Բաղդասարեան
թեմ. պատգամաւորներին երկու ան-
գամ խորհրդակցութեան հրաւիրեցինք,
թէ այս նկատմամբ մի էլք գտնելու
և թէ նոր պատգամաւորների ընտրու-
թեամբ թեմ. ժողովի գումարման մի-
ջոցներ որոշելու, բայց այդ խորհրդակ-
ցութիւնն եւս ճեղի չունեցաւ»: Դէ-
այդ նշանակում է որ այլևս չկայ և
չի գործում, ուրեմն և չեղելով պէտք

1) Սկիզբը տես: (Միտք) № 27: Սոյն յօ-
դուածը ամբողջապէս գրուած է յանձնուած
էր տպարանին նախքան Անպաշտ 7-ի պատ-
գամաւորական ժողովի գումարման ու նրա
արած ընտրութիւնը: Սակայն մենք էլ
անփոփոխ պահեցինք յօդուածը, չնայելով
շատ քան պէտք է փոխուէր անրացատրե-
լիքէն շատաւ կատարած առաջնորդական
ընտրութիւնից յետոյ:

2) Սոյն յօդուածի բոլոր ընդգծումները
մերն են:

3) Թերեւս նոր ընտրութեան մէջ էլի հը-
ներից վերակոչուեն պաշտօնի այդ մեզ
հոգ չէ, միայն պահանջում ենք, որ վեր-
ջապէս լինի ժողովրդական ընտրութիւն և
ժողովրդական իսկական ներկայացուցչու-
թիւն, որը խեղդուած էր ցարդ:

է համարել այդ պատգամաւորաց ժո-
ղովրդ:

Աւելի առաջ երթանք և խենք յու-
նիս 15-ի և 19 համարի պաշտօնակա-
նը:

«Թեմական ժողովի և թեմական
խորհրդի կազմալուծմամբ միակ պա-
սախանասու ներկայացուցիչը մնա-
ցած լինելով թեմական իշխանութեան
իշխանութեան տակ...»

Երկրակացութիւնները մենք թող-
նում ենք ընթերցողներին:
Սակայն պէտք է շեշտենք, որ կամ
առաջնորդարանը — այսինքն այն երկու
հոգին «որ խորհուրդ կազմել չեն կա-
րող» բայց և ներկայացել են իբրեւ
թեմ. խոր. պէտքէն ետեւողական լինի իւր
թեմով հրատարակած պաշտօնական
ազդերին և թեմ. ժողով ու թեմ. խոր-
հուրդ կազմալուծ ճամաւի և, ըստ
մեր պահանջի, յայտարարէ միանգա-
մայն նոր ընտրութիւններ, կամ նախա-
պէս հերքէ և ջրէ իր և իր առաջնոր-
դի վերադարձները, և նոր ապա լը-
րացուցիչ ընտրութիւններ կատարէ:
Սրանցից որոն ուզում է թող ընտրէ:
Այլ ճանապարհչկայ կորրեկտ վարուողի
համար:

Նախքան մեր խօսքը վերջանելը
մենք պարտք ենք համարում Վեհի
ուղարկած ժամանակաւոր կառավար-
չին բացարձակ ասել հետեւելու:

Գոհ ենք և հպարտ, որ Վեհը
բարձր գնահատելով ժողովրդական
ընտրութեան գերագոյն սկզբունքը և
կամենալով նորէն ժողովրդին հրաւի-
րել տէր կանգնելու իւր իրաւանց, ու-
ղարկել է մեզ մօտ բարձրապատիւ հ.
Մելիք Թանգեանին: Սակայն ինչպէս
յիշել ենք, նախկին պատգամաւորները
որոնք գումարել էին յանուն ժողո-
վրդի չէին ժողովրդի իսկական ըն-
տրութիւնը և եթէ հ. Մելիք Թանգեանը
կատարէ միայն լրացուցիչ ընտրու-
թիւններ, պայմանադրական Վեհի
կամքին, որովհետեւ եղեալ պատգամա-
ւորները ժողովրդի մարդիկ չէին, այլ
որոշ թափախի և յայտնի ապստամբ-
ներով ընտրուած մարդիկ, որոնք ադ-
գի առաջնորդարանում բնաւ առիթ
չեն փախցրել ոտնահարելու ու նու-
ապատեցնելու առաջնորդի լոկ իբրեւ հո-
գեւորականի դիրքը և չփախցնելու ու մե-
ծելու էքմիածնի ու նրա գահակալի
գերագնութիւնը ու իշխանութիւնը
այստեղի ազգային գործերում: Այլ
կերպ եթէ վարուելու լինի, ապա հ.
Մելիք Թանգեանը կարծում ենք, հա-
կասած կլինի իր կոչման իր պաշտօ-
նին և իր մեծաւորին:

Ժողովուրդը ապաքինի էր եւ-
թարկել այդ անհաւաք պապօսնա-
ւորութիւնը, ուստի և նա կենք չունե-
ցաւ և այդտեղից ծայր առան թեմի
աւերածութիւնները գործ դարձան
կարող է միայն ժողովրդական ազատ
ու անկախանքը բուռն ընտրուած և
առաջ եկած պատգամաւորաց նոր
կազմը³⁾:

Մենք յուսով ենք, որ գերապա-
տիւ հայր Մելիք Թանգեանը, այսքան
պարգաւանութիւնից յետոյ, կանէ ան-
շուշտ իմաստնաբար, արդար և օգ-
տակար, ի վերաջնորդութեամբ ի
բարձրաց. մի առաջնորդարանի վարկի
և ժողովրդական ներկայացուցչութեան
նստեցած հեղինակութեան,

Ա. Տ. Վ

Ասրպատականի Հայոց Թեմական
կամ Պապօսնաւորական Ժողովի Ընդհ.-
վիճակը եւ Անդամաց ցուցակը

Մի դառն և անխեղ անկատար
ունենք մենք Հայերս: Եւ այդ այն է,
որ մեզանում ամեն ինչ գլխիվայր է,
ծուռ, խնամիական, սխալ հասկացուած,
խառնակ կամ ապօրէն:

Ընդունում է որ մենք «գար-
գացած» և «հասուն» ժողովուրդ ենք:
Եւ որպէս այդպիսին՝ մեք ժամանա-
կը եկած համարեցինք «թօթափելու»
մեզնից հնութեան փոշին» և առաջ
ընթանալու համաձայն նոր գաղափար-
ներին, նոր մտքերին:

Եւ ինչ արեց, աւելի ճիշտ՝ ինչ
անել տուին մեզ մեր մի քանի
«գործիչներ»-ը:

— Մենք պահանջ դրինք ժողովուր-
դական ներկայացուցչութեան, իբրեւ
նոր օրերի գաղափար, գոնէ, մեզնում
և սահմանափակելու ուղեցինք արհի-
կամ բարձրաստիճան եպիսկոպոսների
նախնի օրերի միապետական կամ մի-
անձնայ իշխանութիւնը և նորան իբ-
րեւ աշակից տուինք մի խորհրդակ-
ցական մարմին, որ մեր ներքին-ազ-
գային հասարակական ամեն մի գործի-
կառավարութիւնը կրէր ղեկավարիկ
բնոյթ:

Ինչպէս այս բոլորով նպատակ
ունէինք-կամ գոնէ այդ պիտի լինէր
նպատակը-ստեղծել հնից առաւել ու-
ժեղ, առաւել բարեկարգ ազգային մի
իշխանութիւն, որի իւրաքանչիւր մի
քայլափոխում պէտք է գերակշռէր
ժողովրդի կամքն ու իրաւունքը:

Տարաբաղաբար մենք բարեբար
հետեւեցինք չհասանք: Եւ չհասանք
չորհիւ հայկական ու թափախալիս
ինքնայատուկ գործելակերպի և ամբո-
խավարական ցնորամիտ քաղաքակ-
նութեան: Մինչ օտար ազգերի մէջ
ժողովրդի միջամտութիւնը իւր երկրի,
իւր ազգային, պետական և հասարա-
կական գործերի մէջ առաջ է բերում
նոր քափ, նոր քափութիւն ու կեն-
սունակութիւն, մեզանում հակառակ
երևոյթի է նկատուում:

Այն օրից ի վեր, երբ կազմուե-
ցաւ մեզանում թեմ. ժողով ու թեմ.
խորհուրդ՝ մեք ազգային գործերը ըն-
թացան աւելի վատ, առաջնորդարանի
հմայքն ու հեղինակութիւնը իջաւ-
նումում, մինչ դեռ բոլորովին հա-
կառակ պէտք է լինէր:

Գոնէ այսօր անժխտելի փաստ է,
որ իւրաքանչիւր մի աշխատես, իր-
ազեկ և փաստերն ու իրողութիւննե-
րը կշռադատել գիտցող անձնաւորու-
թիւն կարօտով ու անփութանքով է յի-
շում: Ստեփաննոսի, Սուքիասարեպիս-
կոպոսի և անգամ Սարաճեանի օրերը և
այդ օրերի առաջնորդարանի բացար-
ձակ հեղինակութիւնը հանդէպ մեր օ-
րերի առաջնորդարանի թուլութեան,
անշուքութեան և անկման:

Պատճառը դարձեալ հայկական
խոտորանակութիւնն է և կանխակալ
կարծիքների գերի դառնալը:

— Օ՛հ կղեր, հայ կղեր... Նա
էլ ընդհ. կղերի կտորն է, պէտք է նը-
րան չէզոքացնել, վարկաբեկել և կո-
տրել նրա «անսահման» հեղինակու-
թիւնը: Այսուհետև ոչինչ Ստեփաննոս-
ներ... այլ ժողովուրդ... ղեկավարաւոր-
ւոր... հոգեբանութիւնը մեր հիպո-
թակութիւնը «առաջնորդութեան», որ-
ոնք ամեն խորհրդում իրօք պայքար

են մղել կարծեցեալ «աւտօկրատ»
«կղերի» դէմ և փոքրացրել նրան և ա-
ռաջն ընդլայնել մեր ուսման առջև:
Բայց մենք իմանանք թէ ինչ
արին, «ժողովուրդ» և «ղեկավարաւոր»
բառերը կամ ժողովրդական գեր-
իշխանութեան, «շատագոյնները»:

Այստեղից ստորերկրեայ միջոց-
ներով գաւառական ագէնտներին «զա-
կազ» ու հրահանգներ դրեցին, «մեր-
ոնցից» կամ «ընկերներից» ընտրել
տալ պատգամաւորներ, Հրամայեցին և
եղաւ: Շնորհիւ այդ կուսակցամոլական
գործելակերպի Ատրպատականի պատ-
գամաւորաց ժողովն եկան մեծ մա-
սամբայախիսմարդիկ, որոնք ընդհ. ոչինչ
չունին այս ժողովրդի հետ, որոնք
կամ չէին եղել իրենց ընտրող վարում
և կամ բնաւ ծանօթ չէին իրենց ըն-
տրողներին: Այլ և ընտրուեցան այն-
պիսիները, որոնք ոչ միայն ցարդ չեն
կարդացել իրենց ուղեցոյց Ատրպա-
տականի թեմ. կանոնադրութիւնը, այլ
և եթէ կարդան էլ չեն հասկանալ:

Ում էին գնում ներկայացնե-
լու այդ «պատգամաւորներ»... Յա-
մենայն դէպս ոչ ժողովրդին, ոչ նրա
կամքն ու իրաւունքները: Եւ այդ տե-
սակէտից էլ ընդհ. ժողովուրդը իսպառ-
անաւորեւ գտնուեց ղեկավար պատ-
գամաւորութիւնը և դէպի նրա ընտ-
րած թեմ. Խորհուրդը, որ Պարսից
դռները գնացող, լեզու իմացող, գործ
տանող (գոնէ վերջին շրջանում) ան-
ղամներ չունեցաւ:

Ու շնորհիւ այդ երկու մարմին-
ների, ինչպէս բացատրեցանք մասին
չենք խօսում-անձեռնահասութեան,
անհեղինակութեան, մեր ժողովրդական
ներկայացուցչութիւնը, կամ գոնէ
այդքանից յայտնուեց թիւնը-ցաւ ա-
մել-եղաւ չարիք, գործերն ու դատերն
ընթացան գիկականերով: Այնպէս որ
այսօր մենք կանգնած ենք Սարմա-
տեցոյ լինել չլինելու հարցի առաջ,
ակնատես ենք դաւանափոխութեան,
առաջնորդարանի՝ շուրջ 3000 րուբլի
պարտքի, կալուածների գրաւմանց և
նման շատ կորստաբեր հարցերի:

Մենք վստահ ենք, որ եթէ կու-
սակցամոլական ախտը մարդկանց չու-
րացրած չլինէր, որ եթէ թողնէին
բուն ժողովուրդը անկաշկանդ և ան-
զակազ ընտրութիւններ կատարէր,
ապա նրա պատգամաւորների ցանկը
կունենար բոլորովին այլ անուններ,
այլ պատկեր, առաջնորդարանն ու ազ-
գային իշխանութիւնը կլինէին հեղի-
նակաւոր ներսում և պատկառելի
զբոստ:

Օտար, գոնէ, բարեկիրթ և կուլ-
տուրական ժողովրդների մէջ պատգա-
մաւորները ընտրուում են նոյն ժողո-
վրդի կամ այդ ժողովրդի կուսակցու-
թիւնների ականաւոր, կրթուած, ու-
սումնական, գիթի ու հեղինակու-
թեան տէր մարդկանցից:

Արդ, տեսնենք թէ ովքեր մենք ըն-
տրուած Ատրպատականի հայոց
պատգամաւորներ, որքան նրանք ահ-
ղացի են, որքան կրթուած, գիթի հե-
ղինակութեան տէր են, որքան նրանց
ճանաչում է ժողովուրդը կամ որքան
իրենք ծանօթ են ժողովրդին և ինչ
բարոյական կապ կայ ժողովրդի և
այդ ընտրեալների միջև, որոնց շա-
հերի «պաշտպան» և կաթիլներին
«ծանօթ» ներկայացուցիչներն են
նրանք: Հրամայեցինք մեք ցուցակը
գիտութիւն Թաւրիզի հայոց և ընթեր-
ցողներին:

Յ Ո Ւ Յ Ո Վ Պ Ե Տ Գ Ե Մ Ե Ի Ո Ր Ն Ե Ր Ի

1. Կարապետ Արեան պատգամաւոր (Լիւլաւի) Թաւրիզի—հրաժարուած	
2. Մուշեղ Տ. Զաքարեան „ „ „ „ „ „	
3. Յովսէփ Մովսիսեան „ „ „ „ „ „	
4. Վահան Անանեան „ „ „ „ „ „	
5. Յակոբ Աւագեան „ „ „ „ „ „	
6. Վարդան Վարդանեան „ „ „ „ „ „	
7. Կարապետ Արեան „ „ „ „ „ „	
8. Կարապետ Պիոնեան „ „ „ „ „ „	
9. Մկրտում Սահակեան „ „ „ „ „ „	
10. Բուզադ Մանասէրեան „ „ „ „ „ „	
11. Սուրէն Յովհաննիսեան „ „ „ „ „ „	
12. Ներսէս Բալայեան „ „ „ „ „ „	
13. Մեսրոպ Տ. Յակոբեան „ „ „ „ „ „	
14. Պետրոս Մ. Անդրէաս „ „ „ „ „ „	
15. Գասպար Յակոբեան „ „ „ „ „ „	
16. Ամբաստ Մե. Սարգս „ „ „ „ „ „	
17. Մնացական Աւագեան „ „ „ „ „ „	
18. Մհ. Աւետիս Մ. Սարգս „ „ „ „ „ „	
19. Վարդան Վարդանեան „ „ „ „ „ „	
20. Գրիգոր Մե. Ազար „ „ „ „ „ „	
21. Նիկողայ Տէր Յովհան „ „ „ „ „ „	
22. Ստեփան Ստեփան „ „ „ „ „ „	
23. Ստ. Ստեփանեան „ „ „ „ „ „	
24. Ստեփան Նիկողայ „ „ „ „ „ „	
25. Սեդրակ Ժամհար „ „ „ „ „ „	
26. Ռ. Մովսիսեան „ „ „ „ „ „	

Սոցաւոր ռազմաւոր զօրքն ու կա-
րող են վերջնաւորել, իսկ սամա-
համապատասխան ընդմիջում հետեւ պէտք
է մասն նման ծանր պաշտօնից թող
անցնելու ու գաւառի ժողովրդի դա-
ւաւն դրութիւնը մեզ խրատելի աւե-
լի շիտակ և խելացի լինին արտօնե-
տե մեր ընտրութեանց մէջ, որպէս
զի ձախողած շատ գործեր ուղղել կա-
րողանանք և ստեղծենք մի առաջնոր
դարան, որ պարծանք լինի մեզ հայ-
երիս և պատկառագրեցիկ արտաքին-
ներին:

1) Սուրբուզը վաղուց դառել է
ճակագր հող և մեզ համար իսպառ-
անհասկանալի է, թէ ինչո՞ւ պ. Տէր
Յովհաննիսեանը իրեն շարունակում է
պատգամ. համարել և ճանաչել այն
գաւառամասի հայերի, որոնք այլ
ևս Ստրպատականի իշխանութեան
չեն ենթարկուում: Երեւի Ֆակտը քիչ
են համարում և սպասում են միջազ-
գային պաշտօնական ծանուցում այդ
գրաւման մասին:

Օգտուելով առթից՝ հարցնենք,
թէ մեր այս «պատգամաւորները» քա-
նի հողի խօսած ու կարծիքներ յայտ-
նած կլինին Նիստերում յարուցուած
խնդիրներէ մասին: Քանի՞ն իբրեւ
«ծանօթ» իրենց ընտրողների առաջա-
դրել են կամ ներկայացրել պատմ.
ժողովներում իրենց ժողովրդի կարիք-

ները պահանջները, մանդատները կամ
որ մէկը այդ «հարազատ» պատգա-
մաւորներէից իր հաշիւն է տուել իւր
գաւառամասին:

ԴԻՏԵԿԱՆ

ՆՈՐ ՄՏՔԵՐ 1)

Սակայն ինչ կարող է լինել դրա
արդիւնքը, որպիսի տնտեսական պայ-
մաններ կստեղծեն լոյսի կատարե-
լագործմամբ ապագայում և որքան
նա կփոփոխի ներկայ հասարակար-
մեկանիւղի յօրինուածքը:

Յառաջ բերենք Թովմաս. Ա. Է-
զիսընի կարծիքը:

«Ինչ համար շատ պարզ է, ասում է
նա, որ յառաջիկայ կէս դարում գի-
տութիւնը կփարատի գիշերուայ խա-
ւարը: Բնութեան ուժերից մէկի եւ-
րօտրականութեան միջոցով արդէն
կվերանայ գիշերուայ և ցերեկուայ
մէջ եղած ֆիզիքական տարբերութիւ-
նը: Ահա մի ոյժ որը գէնք է
դառնում բնութեան իրեն դէմ կռուե-
լու համար:

Նաւագնացութեան, էրօպլաններ-
ը կազմը և ընթացքը, փոխադրու-
թեան միջոցները, որոնք բոլորը դժ-
ուարութիւններ են հանդիպում այս
օր, մեծ դիւրութիւնների առաջ կան-
նա:

1) Տես սկիզբը «Միտք» №-26

գնած կլինին:

Գրաստներին ամբողջովին կփոխա-
րինի եւրօտրականութիւնը և ամեն
ինչ կկատարուի եւրօտրականութեամբ:
Կարելի կլինի ամենա աժան
պայմանով տներ կառուցանել: 150
դոլար վարձ ստացող բանտերը այլեւ
վարձ չը տայ այլ իր սեփական տու-
նը կունենայ որը իւր յարմարութիւն-
ներով նայնքան լաւ կլինի որքան իր
գործատիրոջը:

Սօցիալական անբաւականու-
թիւնները կմեղմեն եւր գործաւորը իր
սեփական տունը կունենայ:

Բժշկականութիւնը կվերացնի անբու-
ժելի համարուած հիւանդութիւնները,
սօցիալական գիտութիւնը՝ խեղճութիւ-
նը, իսկ օդային ճանապարհորդութիւնը
պատերազմը:

Ինչ վերաբերում է գիտութիւն-
ների զարգացմանը, դրանց կատարած
փոփոխութիւններին, այդ մասին որ-
քան էլ բազմապիսի լինին կարծիքնե-
րը այդու հանդերձ բոլորիս համար
պարզ է որ մօտիկ ապագայում մեծ
յեղաշրջումներ պէտք է լինեն:

Էզիսընը ասում է, «Սօցիալական
անբաւականութիւնը կմեղմի երբ գոր-
ծաւորը իր սեփական տունը կունե-
նայ: Եւ որպէս բացառութիւն նա ա-
ւելացնում է, չնչին ուժիկ ստացողը
վարձու տան մէջ չի ապրի:

Ու՛ր ինչպէս է դատում:

Այս է դրուած մեր առաջ և եթէ
մենք կարողանանք հասկանալ այդ և
բացատրել, մեզ համար պարզ կդառ-
նայ թէ Էզիսընը և առ հասարակ մեզ
մօտ եղող մտածողները որպիսի ար-
տայալութիւններով են որակում իր-
ենց ենթադրութիւնները ապագայի
վերաբերմամբ:

(Շարունակելի)

L. S.

ԹՂԹԱՎՅՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՒՆԵՐ ԹԵՎՐԱՆՑ

25 Օգոստոս

Հաստատ աղբիւրներից տեղեկա-
նում ենք, որ կառավարութիւնը պատ-
րաստուած է շուտով ծանուցումներ ա-
նելու առաջիկայ Մէջլիսի նոր ընտ-
րութեանց համար:

Տեղիս Շվէդացի սպաները մի
մեծ գումար են խոստացել որոշ ան-
ձնաւորութեանց, որպէս զի կարողա-
նան գանձել ամսոյս 19-ին փոստը կո-
ղպտող գողերին:

Հաշիւ-Ալի-Ղուլի խան Բախտիար-
ցին հեռագրեց Գիւրգիստան գտնուող
իր Զիա-Սուլթան որդուն, որ նա զի

նուորներով անցնի Բախթիար- իրենց
երկիրը: Իսկ ինքն էլ շուտով մեկնե-
լու է Եւրոպա բժշկութեւն համար:

Սալար-էր-Դովլէն վերադառնալով
Քիրմանշահ, փառաւոր ընդունելութիւն
է գտել Մար-Մահմատ խանի կողմից:
Սալար-էր-Դովլի հետ է եղած նաև
նշանաւոր աֆէրիստ վրացի իշխան, և
վերջին տարիներս Պարսկադաւանու-
թիւն ընդունող Ամիր-Ալի իբն:

Նոյնպէս տեղեկանում ենք, որ
կառավարութիւնը կանչել է խնամա-
կալին. վերջինս էլ պատասխանել է
որ շուտով Պարսկաստան կը վերա-
դա. նայ:

Թէհրանում աջ ու ձախ խօսուում
է, որ յայտնի Դէմօկրատ Հէյդար և
Զարդանի որդի Աբօլ-Նասմ խաներն
էլ Սպահանն են վերցրել, և առաջար-
կել կառավարութեան այն, ինչ որ ա-
ռաջարկել էին Քիրմանշահում ըմբոս-
տացողները:

Ամսոյս 21-ին երեկոյան Ժամի
5-ի մօտերը Մաշիւր շահի բակում
նորակազմ ժանդարմները սիկար ձիւ-
լիս փողիները կամեցել էին արգելել.
այդ պատճառով ընդհարում է տեղի
ունեցել ժանդարմների և փողիների
միջև: Արձակուել են մօտ 50 զնդա-
ներ, բայց Շվէտացի մի սպայ վրայ
հասնելով հանդարտացրել է. ժանդար-
մները ունեցան երեք վիրաւորներ:

Շվէդացիները գիւնուորական օ-
րէնքով բանդարկեցին 20-ի չափ ժան-
դարմներ, որոնք մասնակցել էին վե-
րոյշիւալ կռուին:

Շահ Աբդուլ Ազիմի ոստիկանու-
թիւնը ձերբակալեց նախկին կօզակ
Ալի Շահին և բերեց քաղաք: Բայց
Ռուսաց դեսպանատունը խստիւ պա-
հանջեց և Պարսիկ կառավարութեան
ձեռքից ազատեց որպէս Ռուսա-հպա-
տակի և տարաւ դեսպանատուն: Ալի
Շահը խիստ միայնակ և Նա
եղել է Մահմէդ-Ալի Միրզայի և Ար-
շատ Դովլի բանակներում:

S. Ք.-եան

Թարմ լուրեր Մայրաքաղաքից

3 սեպ. Թէհրան

Զանազան ցեղերից բաւականա-
չափ մեծ թուով մարդիկ եկել են
Քիրմանշահ օգնելու Սալար զովլէին,
և Եւր մահադ խանին: Վերջինս նո-
րեկներէից ընտրել է համարեա հար-
իւրիս տասը, որոնց իւր հրամանատա-
րութեամբ բերել հասցրել է Քիրման-
շահի, Քուրդիստանի և Համադանի միջ-
նալեռնաշղթայի անցքը կազմող Բիթ-
սուրիս վայրը:

Ք Բեռլին բախտիարցոց հետ ճանա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԿՆՈՋ ԴՐՈՒԹԻՒՆԸ 1)

Շ. Լեւոնտօսի

Ամբողջ Պոլինիզիայում և Բալկան
պոլիսներում, բայց երբ մի ընդհանրա-
բնոյթ են կրում, նայած տեղական տնտե-
սական պայմաններին. ընդհարապէս կնոյ
դրութիւնը աւելի խիստ է այն կղզիներում,
որ ապրուստի միջոցները դժուարու-
թեամբ են հայթայթուում: Օրինակ՝ Նոր-
Ջիկադիայում կանանց ստրկութեանը ա-
ւելի ծանր է, քան Նուկագիլում, ուր ապ-
րուստի միջոցները առատ են: Այդտեղ կա-
նանց պարտականութիւնն է հսկել երկաթ-
նեղի, թիւնների կեղեկը՝ գործընթացներ
հիւսել, տան ներքին հողա քաշել, իսկ տը-

1) Տես «Միտք» №-27

կուր որոնում տարուայ բոլոր եղանակնե-
րին, նաւաներ պատրաստում, թիւալար-
ում. և այս բոլորը նա կատարում է մինչև
պնգամ ան ժամանակ, երբ ծծկեր երեխայ
ունի, որին նա կրում է մէջքին կաշուէ
պարկի մէջ դրած: Երբ նա ծնւնում է և
հետեւապէս անունդունակ դառնում իր
պարտականութիւնները կատարելու մէջ,
այն ժամանակ, որպէս հրախուսողական
զգացմանց արտայայտութիւն, նրան փա-
ռաւորապէս ուտում են կանխօրէն թաց
փայտի ծխի մէջ խեղդելուց յետոյ: Այն
հարցին թէ՛ ինչո՞ւ չեն թողած կանանց
էք գաղութ, պատասխանում են՝ «չենք
մեզ համար որոնում են եսպօ (ջրուն):»

Մայր ցամաքներում, որտեղ կենսա-
կան մթերքները այնքան էլ դժուարու-
թեամբ չեն ձեռք բերուում, ինչպէս կղզի-
ներում, մարդը զազանաբար չէ վարւում

կնոյ հետ. բայց այնուամենայնիւ նա ծան-
րաբեւոնում է գործելով: Պատագոնիայում
տղամարդը համարեա ամբողջ ժամանակ
քնի մէջ է անցկացնում իր օրը, երբ որսի
չէ գնում կինն է մորթում կենդանիներին,
կաշին քերթում, դաճաղում, կենդանու չո-
րացրած ճիւղով թիկնոցներ կամ վրան-
ներ կարում: Երբ մի տեղում երկար մնա-
լուց յետոյ կենսական մթերքների պակ-
սութիւն է զգացւում, քոչում են մի այլ
տեղ իրանց բոլոր ունեցուածքով միասին
և երբ այդ գաղթականութեան ժամանակ
թիւան անասունները քաւականութիւն չեն
տալիս սայլերը քաշելու, այդ պակասը լը-
րացնում են կանայք՝ լծելով սացիւրին
որպէս լծկան անասուններ: Ինչ սակ է կու-
լի, որ տղամարդը անպատուութիւն է հա-
մարում իրան մասնակցելու այդ տեսակ
գործին:

(Շարունակելի)

Շ. Ա.

պարհունել է Բաբրդապանից յառաջապահ գունդ անուամբ, սակայն յայտնի չէ թէ՛ հրան է գալիս թէ՛ արշաւում է եւար Մամադ խանի բանակին վրայ: Աւելի շուտ հաւանական է վերջինը քան առաջինը, որովհետեւ բանից դուրս է եկել, որ կառավարութիւնը Յովսէփ Միրզանին ուղարկել է աւելի շատ նրա համար, որ Բեռուս պատրաստի եւար Մամադ խանի հետ կռուելու իսկ վերջինս չյաջողուելու դէպքում ապա բանակցութիւններ կատարի եւար Մամադ խանի հետ հաշտութեան համար:

Կառավարութեանը եւար Մամադ խանի բանակները հաւանական է որ մինչ Սեպտեմբերի 5-ը զարնուեն իւրար, որովհետեւ Յովսէփ Միրզայեանցից ստացուած տեղեկութիւնները ցոյց են տալիս թէ ինքն էլ վախենում է իրմանչա՛հ երթալու, ըստ այնմ հեռագրում թէ արդէն բանակցութիւնը տարածամ է:

Սպահանի խնդիրը վերջացել է նրանով, որ կառավարութիւնը յանձն է առել տալ մի նշանաւոր գննարկ Սմիր Մօճահիտին որպէ՛ս «նուէր» որ կանչուած է 100 ձիաւորով թէ՛ իրան, ստանձնելու մի բարձր պաշտօն: Սմիր Մօճահիտի հետ զարու էն նոյն 10-15 փոքրիկ խաներ, վերջիններին Վր խոստացուած է տալ երկրորդական դաստաւորների պաշտօններ զանազան քաղաքներում: Ի փոխարինութիւն այդ պաշտօնների նոքա ևս ընդունել են Սարգարը Զէնգի միահեծան իշխանութիւնը. (ասում են որ վերջինս կարգադրուած է եղել Անգլ. կառավարութեան կողմից և տեղիս դեսպանին յանձնարարուած է եղել ամենախիստ միջոցներ ձեռք առնել նրա յաջողութեան համար):

Նախորդ անգամուայ լուրերի բաժնում ասուած էր հաջի Ալի Դուլի խան Սարգար Ասադը բժշկուելու և եւրոպա գնալու հմր., սակայն կառավարութիւնը արգելեց, առայժմ մնալու է թէ՛ հրան, իհարկէ նաեւ արգելուած կըլինի նրա որդու Զիա-սուլթանի Բուրգիսիանից Սպահան մեկնելը:

Կառավարութիւնը արդի Դաւաժ Դովլէթի տալով մի մեծ գումար՝ ուղարկեց Իւրոպա շտապեցնելու Նաիր Սալթանին Լօնդօն՝ ներկայ լինելու այն ժողովին ուր Բուսական արտաքին գործոց նախարարը և սրբազան Գրէյը պիտի վճռեն Պարսկաստանի ճակատագիրը. Նոյնպէս և Սադ-է-Գ Դովլէն է գնացել Մամադ Ալի միրզի կողմից:

Եւագրի դատաւարութիւնը ևս յանձնուած է սարգար Չէնգին, որ սա իրա կամեցած մարդոց ձեռքով կառավարեալ կողմը:

Այս օրուայ մայրաքաղաքի յաւելուածները յայտարարում էին որպէս թէ եւար մամադ խանը ձերբակալել է Սալար Դովլին: Սուտ լուր լինելու համար ոստիկանութիւնը ձերբակալեց ցրուիչներին և արգելուեց որ յետ այսու լոյս չտեսնեն յաւելուածներ:

Պորսսանի նահանգի Բուժնուրդի ազդեցիկներէն մէկը չկամենալով ենթարկուել դատաւոր Նայեք Դովլին վերջինիս կողմից ուղարկուած ոյժերը ցրել է:

Կառավարութեան ռազմամթերքը բոլորովին վերջացել է երկու օր անգամ կռուելու պաշար չէ մնացել:

Տ. Բ-եան

Լ Ո Ւ Ր Ե Ր

ԹԱԽԻԶ

Ամսալս 16-ին, կիրակի օր, ժամը 10-ին առաջնորդարան մ'տեղի է ունենալու խորհրդակցական ժողով տառերի գիւտի և տպագրութեան յօրելեանի Հոկտ. 13-ին տօնելու մասին: Հ. Մել. Թանգեանի կողմից այդ առթիւ հրաւերներ են ուղարկուած քաղաքիս դպրոցների ուս. խմբերին, աղքատախնամի վարչութեան և խմբագրութեան:

Ամսալս 12-ին Բէգլէրէզին մի յայտարարութեամբ արգելել է, որ բազարում նպ. րավաճառները և մանուֆակտուրի բնարկանները խանութից դուրս իրեր չդնեն գետնում և չարգելեն երթևեկութիւնը: Արգելում է կառքերի երթևեկութիւնը բազարներում: Կառքերի յետը նստող փողոցի մանր տղոց ևս յետ պահելու, փոխներին հրամայում է բռնել այդ տղաներին առանց նրանց ծեծելու և դատարան բերել միայն նրանց ծնողներին կամ մեծերին՝ պատասխանատուութեան ենթարկելու:

Հրապարակուած են Սիպահար Ա. ազամի և Հաջի Եօշա-էր-Դովլի բարձր ուշադրութիւնը ձեռք բազարի խիստ մեծ անմարդութեան և ջանքերն առնելու անվերաց փողոց վերայ: Երթևեկութիւնը ամեն օր և մանաւանդ Շէշկիլում և ապա «Էլօնօմից» մինչև «Էլէճիլի» թուրքաց հանգստարանը ուղղակի մի պատուհաս է՝ Փոշու ամպերի մէջ մարդիկ գրեթէ հնար չունին զրօսանքի ելնելու: Ժամանակ է, կարծում ենք որ կառավարութիւնը նայի ազգաբնակչութեան առողջապահական պայմանների վրայ Պէտք է պարտադրել ի հաշիւ տնտեսների առուօտ և երեկոյ մանաւանդ բանուկ փողոցներում, ջրել և աւելի փողոցները և ազատել մարդոց մաքուր հագնուածքը մուր ու կեղտի բաժին դառնալուց և թոք ու աչքերը վնասուելուց:

Այս վերջին շաբաթը ամբողջ քաղաքում և ամենայն ազատութեամբ ու յամառութեամբ խօսուում է էքս Մամադալի շահի Պարսկաստան դարձի և ժօտիկ օրերում Թաւրիզ ժամանելու մասին:

Սեպտ. 7-ին գումարուած պատգամաւորաց ժողովին ընտրութիւնը Թաւրիզի առաջնորդող հայ շրջաններում առաջ է բերել մեծ դժգոհութիւն: Դժգոհոյն՝ անուամբ են, ու հէնց առաջնորդարանը քանիցս թէ թիւ. խորհրդի և թէ թիւ. ժողովի կողմը լուծուած է համարել վաղուց հրաժարուած մարդիկ ինչպէս և ինչ հիմամբ ընտրութիւն են կատարել: Բոլորովին ապշեցուցիչ է համարուել այն աղաղակող ապօրինութիւնը որ այդ ընտրութեան մէջ ընդունուած է եղել Ս. Ստեփանեանի երկու ձայնը, Ռ. Մովսիսեանի և Յ. Մովսիսեանի մէկական ձայնները: Մարդիկ, որոնք այսպէս թէ այնպէս հնար չունին իրենց ձայնը ներկայացնելու ի պաշտպանութիւն իրենց իսկ անձի, ինչ պէս ինչ ասելով նրանք կամ նրանց ձայնն ընդունողները կարգ են այս ու այն գաւառամասի ժողովրդին ներկայացնել: 18 ձայն ներկայացնող մեր պատգամաւորներէն մի թէ մէկը քաղաքացիական ազգութիւն և կղերկաւորութիւն չի գտնուել ըողորներու այդ աշխարհապաշտի ղէմ: Վերջապէս

ինչ շտապ ընտրութիւն էր: Մենք խորապէս ցաւում ենք որ մեր անհեռատես և անլիշտաւոր պատգամաւորները այդ աճապարած և ապօրինի կազմով արած ընտրութեամբ նասեւեն յարգոյ հ. Մելիք Թանգեանի վաթիշին աւ ժողովրդականութեամբ կատարուած ֆակտը չնորհիւ ապօրինի կազմին հանդիսանում է խիստ հակաժողովրդական մի ակտ, որի ղէմ խափել բողոքում ենք և մենք, և հրաւիրում հոգևոր բարձրագոյն իշխանութեան լուրջ ուշադրութիւն: 18 ձայնից 6-ը մեռեալ պիտի համարել, մնում է 12 ձայն իսկ 12 ձայնը (ունինք ըստ կանոնադրութեան 30 պատգմ.) չի կարող

40,000 հայ ժողովրդի լիազօրն ու իր ձեռքի ճարգմանը լինել:

Այդ «բարեկամ» պատգամաւորները ամենամեծ վնասը տուին մեր թեմի նորեկ կառավարչին

Տ. Լուսի ենք տարինների ինչի թալանի ենթակայ Դուխարդանի էջմիածնապատկան կալուածները պիտի ծախուեն և դրամները պիտի գործադրեն նոր առաջնորդարանի շէնքի համար: Հ. Մ. Թանգեանը, լսում ենք մեկնելու է Դուխարդան կալուածները դիտելու:

Խմբագիր-հրատարակիչ՝
Ա. Տ. Վարդանեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ



„МАГАЗИНЪ ПАРИЖЪ“

PROPRIÉTAIRE J. D. THOMASSIAN

ՓԱՐԻԶ ՄԱԿԱՐԶԻՆ

ԿԱՆԱՑԻ ՆՈՐ ԲԼՈՒՉՆԵՐ

ՇԱԼԵՐ ԵՒ ՓԷՇԵՐ

Եւ նոր կտրներ, նոյնպէս տերթօսներ, որոնք տաք կամ սառը ջուրը 24 ժամ նոյն անմպերատուրում պահելու յատկութիւն ունին:

ՇՏԱՊԵՑԷՔ ՕԳՏՈՒԵԼ ԱՌԻԹԻՑ

ԾԱԽՈՒՑՈՒՆ

Պարոն Մարտիրոս Նազարբէկեանցի տան դիմաց

ԾԱԽՈՒՄ Է

Տ. Ալմաստ Սիմէօնեանցի տունը երկու սենեակ և ուրիշ յարմարութիւններով:

3—3

Դիմել Միքսա Տէր-Մանուկեանին

ՎԱՐՁՈՒՑՈՒՆ

Վարձու է տրուում իմ նորաշէն, մաքուր և օդասուն տունը, ուր առաջ բնակուած էր Դօքտօր Թրանսուր: Յանկացողները թող դիմեն պ. Վահան Անանեանին:

Արեակ Թովմասըլ կեան

„ՂԱՐԱԳԱԼ“ Ի ԽՅԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ.

Շտապում ենք մեր բաժանողների ներողամտութիւնը խնդրելու, որ „ՂԱՐԱԳԱԼ“-ի (ՆԱԽԿԻՆ „ԱՂԱՂԱՆ“-ի) հերթական համարը չկարողացանք ժամանակին լոյս ընծայել [լոյս գնծայել] Արտասահմանում պատուիրած Թերթիս ՆՈՐ ԿԼԻՇԷԻ ուշանալու պատճառով: Թերթը լոյս կտեսնի մօտ օրերում և կուղարկուի բոլոր բաժանորդներին:

ԿՕՆՅԵՐՑ ԱՐԱՄԵԱՆ ԴՊՐՈՒ ԹԱՏԵՐԱՍՐԱՅՈՒՄ

Կովկասեան նշանաւոր թառխտ պ. ՍՍՄՍՈՆ Կարապետեանը իր խմբով այսօր, շաբաթ, գիշերուայ ժամը 8½-ին տալու է ԿՕՆՅԵՐՑ Արամեան դպրոցի թատերադրահում: Նուազում են Ասիական և Եւրոպական եղանակներ: Տոմսակները ծախւում են ՓԱՐԻԶ մագազինում, ՓԱՐՈՍ տպարանում և Կօնցերտի օրը դպրոցի բակում: Շտապեցէք օգտուել առկից: